ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2019/5-1»

ք.Երևան « » 2019թ.

«ՀՀ վիճակագրական կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Հայրապետյանի, ով գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կարեն Ասատուրյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համացանցի և տեղեկատվության էլեկտրոնային փոխանցման ծառայությունների /շարժական VPN ծառայություն/ մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2025000 (երկու միլիոն քսանհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՀՀ վիճակագրական կոմիտե	Յուքում ՍՊԸ
ք. րևան, Կառավարական տուն 3	ք.Երևան Տերյան 19, բն.4
ՀՎՀՀ 02507509	ՀՎՀՀ 00024873
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<< Ամերիաբանկ>> ՓԲԸ
ՀՀ 900011011054, 900011011013	ՀՀ 1570043102134100
Գլխավոր քարտուղար	Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝
Ա. Հայրապետյան ----------	Կ. Ասատուրյան----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.
HAYRAPETYAN ARAIK 3901710069 Digitally signed by HAYRAPETYAN ARAIK 3901710069 DN: c=AM, sn=••••••••••, givenName=•••••, serialNumber=6ef5a07b89a1, cn=HAYRAPETYAN ARAIK 3901710069 Date: 2019.04.12 16:03:03 +04'00'	Digitally signed by ASATURYAN KAREN 4010830662 Date: 2019.04.11 17:06:07 AMST

Հավելված N 1
« » 2019 թ. կնքված
«ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2019/5-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	**64211300/2**	Վիճակագրական կոմիտեի Մարդահամարի վարչության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխարհագրորեն ամրակցված համարագրման պլանից հատկացված անհրաժեշտ քանակությամբ շարժական տվյալների փոխանցման ծառայություն՝ որը հնարավորություն կտա Պատվիրատուին ամրակցված վայրում/վայրերում ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով իրական ժամանակում ներբեռնելու և վերբեռնելու անսահմանափակ տվյալներ փոխանցեն, GSM 900/1800 ստանդարտի: Տրամադրված յուրաքանչյուր հեռախոսահամարի համար, ծառայություն մատուցողի ցանցում, ապահովել առնվազն 3G ցանցում 2 մբ/վ անվճար տվյալների փոխանցման ծառայություն հնարավորություն: Տրամադրված յուրաքանչյուր հեռախոսահամարի համար պետք է սահմանված լինի մասնավոր հասանելիության կետ (private APN), որը հնարավորություն կտա տվյալները փոխանցել միայն ՀՀ ՎԿ-ի ներքին ցանցի IP հասցեներում և լինի ՎԿ-ի ներկա տվյալների փոխանցման ֆիքսվաց ցանցի մաս (Layer3 մակարդակով): Բացառել զանգելու հնարավորությունը: **Տեղադրման վայր /Հասցե** ՎԿ կենտրոնական ապարատ /ք.Երևան, Կառավարական շենք 3, VII հարկ/ **Քանակը** 125 հատ	դրամ	375000	1	Կառավարական տուն 3	հոկտեմբեր-նոյեմբեր 2019թ..

2	**32411130/3**	**Կապի տեսակը** Թվայնացված տվյալների փոխանցման ցանցի կարգավորում և սպասարկում (VPLS / data)՝ ՀՀ ՎԿ կենտրոնական ապարատ սերվերային հանգույցի (ՀՀ Կառավարության տուն, թիվ 3, VII հարկ) և ՀՀ ՎԿ Մարդահամարի վարչության միջև: **Հիմնական կապ** Internet CIR DPRS 30 Mbps՝ Կառավարության շենք թիվ 3. **Կապի տրամադրման հասցեները և չափերը** ՀՀ ՎԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏ, Ք.ԵՐԵՎԱՆ, ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՏՈՒՆ, ԹԻՎ 3 VPLS / DATA. ՀՀ ՎԿ, Ք. ԵՐԵՎԱՆ, Մ. ԽՈՐԵՆԱՑԻ 26Ա. DATA 50 MBPS, FO **Տրամադրվող ծառայության մակարդակի համաձայնագիր (SLA)** Աշխատանքային ժամեր (Working hours*) - 99.99 Աշհատանքային օրեր, ոչ աշխատանքային ժամեր (Working days*, non working hours) - 99.9 Ոչ աշխատանքային օրեր (Non working days) - 99 **Լիցենզիա** **<<Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման)>> լիցենզիայի առկայություն**	դրամ	150000	1	Կառավարական տուն 3	Օգոստոսի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը 2019թ.
3	**32411130/4**	**Կապի տեսակը** Թվայնացված տվյալների փոխանցման ցանցի կարգավորում և սպասարկում (VPLS / data)՝ ՀՀ ՎԿ կենտրոնական ապարատի սերվերային հանգույցի (ՀՀ Կառավարությնա շենք, թիվ 3, VII հարկ) և ՀՀ ՎԿ վարչությունների միջև: **Հիմնական կապ** Internet CIR DPRS 100-120 Mbps **IP հասցեներ** Համաշխարհային ինտերնետ ցանցին միացում Ստատիկ ռեալ IPv4/36 հասցեների տրամադրում	դրամ	1500000	1	Կառավարական տուն 3	Օգոստոսի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը 2019թ.

		Կապի տրամադրման հասցեները և չափերը ՀՀ ՎԿ կենտրոնական ապարատ, ք.Երևան, Կառավարական շենք թիվ 3, VPLS / data. ՀՀ ՎԿ Երևան քաղաքի վարչություն. ՀՀ ք.Երևան, Տիգրան Մեծի 4 DATA 50 Mbps, FO ՀՀ ՎԿ Երևան քաղաքի վարչության 6 տարածքներ. 20 Mbps, FO - Շենգավիթ, Գ.Նժդեհի 26 - Կենտրոն, Բյուզանդի 1/3 - Արաբկիր, Ն.Զարյան 27 - Նոր-Նորք, Գայի 19 - Քանաքեռ Զեյթուն, Դ.Անհաղթի 11 - Ավան, Խուդյակովի 221 ՀՀ ՎԿ մարզային 10 վարչությունների և տարածքային գրասենյակներ՝ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ (Վ.Պետրոսյան 60) 40 Mbps, FO - Ապարանի տարածք (ք.Ապարան, Գայի 5) 20 Mbps, FO Արարատի մարզ, ք.Արտաշատ (Աթարբեկյան 135/2) 40 Mbps, FO - Մասիսի տարածք (ք.Մասիս, Նոր Թաղամաս 3) 20 Mbps, FO Արմավիրի մարզ, ք.Արմավիր (Զարենցի 24) 40 Mbps, FO - Էջմիածնի տարածք (ք.Էջմիածին, Մ. Մաշտոցի 0) 20 Mbps, FO Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ (Բուռնազյան 2) 40 Mbps, FO - Վարդենիսի տարածք (ք.Վարդենիս, Ռոմանի 7) 20 Mbps, FO - Ճամբարակի տարածք (ք.Ճամբարակ, Սևակի 7) 20 Mbps, FO Լոռու մարզ, ք.Վանաձոր (Նժդեհի 14) 40 Mbps, FO - Ալավերդու տարածք (ք.Ալավերդի, Թումանյան.1ա) 20 Mbps, FO - Տաշիրի տարածք (ք.Տաշիր, Կալինինի փ. 98) 20 Mbps, FO Կոտայքի մարզ, ք.Եղվարդ (Երևանյան 10ա) 40 Mbps, FO - Աբովյանի տարածք (ք.Աբովյան, Խաչատրյան 1) 20 Mbps, FO					

		- Հրազդանի տարածք (ք. Հրազդան, Կամոյի 3) 20 Mbps, FO Շիրակի մարզ, ք.Գյումրի (Բուլվարային 5) 40 Mbps, FO - Արթիկի տարածք (ք.Արթիկ, Բաղրամյան 4) 20 Mbps, FO Սյունիքի մարզ, ք.Կապան (Մելիք-Ստեփանյան3/1) 40 Mbps, FO - Սիսիանի տարածք (ք.Սիսիան, Սիսական 23ա) 20 Mbps, FO - Գորիսի տարածք (ք.Գորիս, Մաշտոցի 3) 20 Mbps, FO - Մեղրու տարածք (ք.Մեղրի, Զ.Անդրանիկի 2 /11 Mbps, FO Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր (Շահումյան 24) 40 Mbps, FO - Վայքի տարածք (ք.Վայք, Շահումյան 16) 20 Mbps, FO Տավուշի մարզ, ք.Իջևան (Երիտասարդական 1) 40 Mbps, FO - Դիլիջանի տարածք (ք.Դիլիջան, Մյասնիկյան 66) 20 Mbps, FO - Տավուշի տարածք (ք.Բերդ, Լևոն-Բեկի 5) 20 Mbps, FO - Նոյեմբերյանի տարածք (ք.Նոյեմբերյան, Երևանյան 4) 20 Mbps, FO **Տրամադրվող ծառայության մակարդակի համաձայնագիր (SLA)** Աշխատանքային ժամեր (Working hours*) – 99.99 Աշհատանքային օրեր, ոչ աշխատանքային ժամեր (Working days*, non working hours) - 99.9 Ոչ աշխատանքային օրեր (Non working days) - 99 **Այլ պահանջներ** • ՀՀ ՎԿ ինտերնետ կապի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ է նախատեսել պահուստային կապուղի ՀՀ Կառավարության տուն, թիվ 3, VII հարկ հասցեում • Անհրաժեշտ է ապահովել լրացուցիչ միացումներ կառավարության ցանցին • Անհրաժեշտ է ապահովել վիրտուալ փակ սերվերներներ (VPS) թվով 4 հատ • ՀՀ ՎԿ կառուցվածքային ստորաբաժանումներում՝ այդ թվում Երևան քաղաքի և մարզային					

		վարչություններում, էլեկտրոնային փոստի կապի ապահովում <<username>>@armstat.am տեսքով և ինտերնետային էջից @armstat.am փոստային սերվերին հասանելիություն (Web-mail interface) SSl միացումով • ՀՀ ՎԿ տարածքում ինտերնետի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ կարգավորումների, ինչպես նաև սարքավորումների ապահովում և տեղադրում: • Ինտերնետ կապի ապահովում նաև հասցեների փոփոխության դեպքում • Կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի առցանց վերահսկման հնարավորություն • Օգտագործված ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում **Լիցենզիա** **<<Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման)>> լիցենզիայի առկայություն**					

Վիրտուալ փակ սերվերների(VPS) նկարագրությունը.

Հնարավորությունները	
Օպերացիոն համակարգ	CentOS 7/ CentOS 5 / MS WS 2008
Գծի տարողականություն	1 Gbps թողունակույուն (Bandwidth)
Տրամադրվող ծավալ	150GB / 150GB / 150GB
CPU	8core / 8core / 4core
Տրամադրվող օպերատիվ հիշողության ծավալ	8GB /8GB / 6GB
1 ժամվա ընթացքում ուղարկվող նամակների թույլատրելի նվազագույն քանակ	300
SSH միացման հնարավորություն	+
DNS ապահովում (support)	+
Երրորդ մակարդակի դոմեններ (subdomain)	Անսահմանափակ (unlimited)
Կայանած դոմեն (Parked domain)	@armstat.am / armstat.am / armstatbank.am
Ամենօրյա պահեստավորում	+
Շաբաթական պահեստավորում	+
Ամսական պահեստավորում	+
Այցելությունների վիճակագրություն	+
Աջակցություն՝ անհրաժեշտության դեպքում	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ վիճակագրական կոմիտե
ք.Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ ցործառնական վարչություն
ՀՀ 900011011054, 900011011013
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ.

HAYRAPETYAN ARAIK 3901710069

Digitally signed by HAYRAPETYAN ARAIK 3901710069
DN: c=AM, sn=••••••••••, givenName=•••••, serialNumber=6ef5a07b89a1, cn=HAYRAPETYAN ARAIK 3901710069
Date: 2019.04.12 16:15:41 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ

Յուքոմ ՍՊԸ
ք.Երևան Տերյան 19, բն.4
ՀՎՀՀ 00024873
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 1570043102134100
Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝
Կ. Ասատուրյան----------
(ստորագրություն)

Կ.Տ.

Digitally signed by ASATURYAN KAREN 4010830662
Date: 2019.04.11 17:06:50 AMST

Հավելված N 2
« » 2019թ. կնքված
«ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2019/5-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64211300/2	տեղեկատվության էլեկտրոնային փոխանցման ծառայություններ /շարժական VPN ծառայություն/										187500	375000	375000	**375000**
2	32411130/3	համացանց								30000	60000	90000	120000	150000	**150000**
3	32411130/4	համացանց								300000	600000	900000	1200000	1500000	**1500000**

** Վճարման ժամանակացույցը ներկայացված է աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ վիճակագրական կոմիտե
ք.Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011011054, 900011011013
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ.

HAYRAPETYAN ARAIK 3901710069

Digitally signed by HAYRAPETYAN ARAIK 3901710069
DN: c=AM, sn=••••••••••, givenName=••••, serialNumber=6ef5a07b89a1, cn=HAYRAPETYAN ARAIK 3901710069
Date: 2019.04.12 16:16:41 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ

Յուքոմ ՍՊԸ
ք.Երևան Տերյան 19, բն.4
ՀՎՀՀ 00024873
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 1570043102134100
Կորպորատիվ վաճառքի բաժնի
ղեկավար՝
Կ. Ասատուրյան----------
(ստորագրություն)Կ.Տ

Digitally signed by ASATURYAN KAREN 4010830662
Date: 2019.04.11 17:07:29 AMST

Հավելված 3
« » 2019թ. կնքված
«ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2019/5-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը ----------
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝----------
Պայմանագրի համարը՝----------
Պատվիրատուն՝ ի դեմս ----------
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2019թ. դուրս գրված N_____ հաշիվ-ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2019թ. կնքված
«ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2019/5-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն